

ընդ ամենայն աշխարհ պէտք է բացազան-
շել և զգուշանալ՝ որ օտարք շոքանակի
պատէալ պաշարէալ են ղէպ, և որոց կո-
կորդ բաց է կլանել զմեզ՝ Վրէսթ. Էրօնի
անասի խորդաւանելով:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՆՏԻՑ ԱՆՏԵԼՈՑ ՍԵՎԱՆԱՅ ՎԱՆԻՑ.

(Շորանգիւն և վրէպ)

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՎԻՄԱԳԻՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՏԱՃԻՐԱՅՆ Ս. ԱՆԱՊԱՏԻՆ
ՍԵՎԱՆՈՒ

Ի վերայ «եան հարաւային կողմն՝ յէկե-
ցոջն որք Լադոնաթանի՝ գրի:

«Յամի Ռերորդի ճ'Պ. Ժաներորդի.
Շնորհօքն Լստուծոյ մեք հարազատ եղ-
բարքս Խօճայ Սուլխանս և Օւլս ի քա-
ղաքէն Տփլսեաց Լսքէն Չիթաղեանց որ-
դիք Թաղայի եկեալ ի Սուրբ Լնապատս
ի Սէվան ծովապատ, զոր ի բազում ժա-
մանակաց մեր կամաւ խոստացաք մեր ապ-
րանաց շահն Ժանորդ տանք Սէվանայ
Լնապատիս, զոր շինեցաք Սուրբ Լստու-
ածածինս Եկեղեցիս: Յիշատակ մի ար-
ծաթի կանթեղ, Խաչ, Բուրվառ, սկիհ,
յիշատակ հոգւոյս հօր մերոյ Թաղային,
մօր Բէկի Սուլթանին, եղբայր Պապի,
Օրորային, քվերանց որդոց բաժինին:
«Եւ միաբանքս խոստացան տարէն Գ.

ժամ մատուցել: Պատարողք վարձաւոցն,
Ի Հայրապետութեան Տեառն Հակոբա,,
Ի վերայ Եկեղեցիէն «եայ արեւմտեան դրան
Լադոնաթանի Տանարին, արարտասար *):

«Շնորհօքն Լստուծոյ նորոգեցաւ տա-
նիք սուրբ Լստուածածնի Եկեղեցւոյս, ի
Հայրապետութեան Տեառն Եփրեմի և
նորած Յովհաննու Պաթուղիկոսի, յա-
ռաջնորդութեան Յօհաննէս վարդապե-
տին, և աշխատանք բոլոր միաբանու-
թեանց, մանաւանդ՝ Պարապետ վարդա-
պետին, որ ի շինութեան մասին սպանաւ
յայլազգեաց ի ժողովարարութեան, որ ե-
լից վանս սգով, որք ընթեռնոյք, ողորմի
ասացէք: Յամի Տեառն 1832, և ի Թուա-
կանութեանս ՌՄՁԼ:,,

(Որպէս ասացին ի միաբանութեանս,
սպանեալ է դոյն Պարապետ վարդապետն ի
կողմանս Շաքւոյ յաւազակաց, ընդ աշ-
խահական սպասաւորին Համաքարերդ-
ցւոյ):

Ի վերայ Ժայտեայ «եան Գաւիին նոյն Եկե-
ղեցոյ, որ գրեալ է ի վերայ Եղիւս և Կա-
յեալ է ի նա:

«Յամի Տեառն 1836: Նորոգեցան ի
հիմանէ գաւիթս սուրբ Լստուածածնի,
և մէկ մեծ մառան . . . չորս օտայ, մէկ
երկար քուչայիւ, արդեամբ և ծախիւք
Լմեցի ծերունազարդ ի Վրիստոս հան-
գուցեալ Ստեփաննոս Ճգնազգեաց վար-
դապետին, որ նախ քան զվախճանն իւր՝
կտակաւ՝ աւանդեաց զծախսն այսոցիկ մի-

(*) Որպէս երևի զքարն արձանագրութեանս
յետոյ են կցեալ ընդ սեմոյն),

ուժ միաբանից անապատիս Նիկողայոս վարդապետին, գիտութեամբ առաջնորդի տեղոյս Յօհաննէս վարդապետին և բոլոր միաբանիցս, որ և աւարտեցաւ օգնականութեամբն Աստուծոյ և ձեռնառութեամբ բոլոր միաբանիցս:

Նիկողայոս վարդապետ Մովսէսեան:

Այն Զին Գրեալ է ըստ այնմ,

«Եւ Աստուծոյ Պաշտպան»

«Այսպէս Ռուսաց Նիկողայ Պաշտպան եկն յաշխարհս մեր ի Հայաստան յամի Տեառն 1837 և եմուտ ի սուրբ Եջմիածինըն ի Հոկտեմբերի 4. և ի 5 սոյն ամսոյս՝ յԱրեւան, և ի 6ն ի մուտս արեգական յառուր չորեքշաբաթի՝ էանց հանդէպ նաւահանգստի Անապատիս օթեանս արարեալ ի զիւզն Չիբուխու մէկ զիշեր, և աստի ի Տփլիս քաղաք, և անտի ևս էանց գնաց խաղաղութեամբ յաթոռն իւր ի Ս. Պ. բուրգ:»,

Նիկ. վարդ. Մովսէսեան:

Առաջի արեւմտեան դրան գաւիթն Զոյն էլեղեցոյն է վերայ որոյ՝ արեւմտեան հիւսիսային զանգուղիէն Զեկեղացի Զեկեղացի:

«Շնորհիւն Աստուծոյ շնեցան սենեակքս արդեամբք Տփլիսայ Հայոց Ժողովրդոց, ձեռնառութեամբ Տեառն Յովհաննու Աթուղիկոսին, յառաջնորդութեան բնիկ միաբանի տեղոյս Յովհաննէս վարդապետին Ղազարսեցոյ, աշխատութեամբ միաբանից տեղոյս Ռ. Մ. Զ. Ի:»,

Ի Զերոյ արեւմտեան լուսամբի Զոյն Զառմաբն, արարատոս:

«Յամի Ռ. Մ. Զ. Ի. Ժաներորդի, շնորհօք Աստուծոյ, մեք հարազատ եղբարքս Սուլեւան, Չալ և Չորապ տվաք նորոգել սուրբ Եկեղեցիս յիշատակ մեզ և մեր ննջեցեղոյն, Հօրն Թաղալին և մօրն Բէկի-Սուլեւանին, հանգուցեալ եղբօրն Պապին, և ամենայն ազգայնոց. այլ և խոստացաք շահ ստացուածոց մերոց, ընդ սմա տասանորդեցոյք: Եւ միաբան

Չիթաղեանց, որդիք Թաղայի, որդոյ Միր-վէլոյ, եկեալ ի սուրբ Անապատս Մէվան տեսեալ զՍուրբ Աստուածածնի Եկեղեցիս, զոր շնեալ յիշատակ, մեր ապրանաց շահի Ժաներոյն տալ զտեղի բնակողաց, և միաբանքս խոստացան տարէն Վ. Ժամ մատուցանել, սուրբ Չառիկին, Վարդապետին, ջրօրհնեաց տօնից: Այս եղև ի Հայրապետութեան Տեառն Յակոբայ: Առաջնորդ Միսիթար եպիսկոպոսի. Բարսեղ վարդապետ հանգուցելոյ:»,

Այն վերոյն Գրեալ է:

«Շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաւ Եկեղեցիս իւր կնածովն*), ի թվին Ռ. Մ. Զ. Ի, ի Հայրապետութեան Տեառն Ղազարի, և առաջնորդ Մարտիրոս վարդապետի: Աստուած ողորմի ասացէք տուրք և ողորմութիւն տվողացն սուրբ տանս, և աշխատողաց, ևս Մարտիրոս վարդապետի որդի Աթապէկն, որ տվաւ Բ. Ժուման ողորմութիւն: Ողորմեսցի ձեզ Աստուած:»,

Ի վերայ հարաւային որոյ ասքէ Առաւելոյ Եկեղեցոյն, արարատոս, ի վերայ Ժան ըղ-Զառմաբն ընդաւր:

«Շնորհօք և ողորմութեամբ ամենազօրին Աստուծոյ, մեք երեք հարազատ եղբարքս Սուլեւան, Չալ և Չորապ տվաք նորոգել սուրբ Եկեղեցիս յիշատակ մեզ և մեր ննջեցեղոյն, Հօրն Թաղալին և մօրն Բէկի-Սուլեւանին, հանգուցեալ եղբօրն Պապին, և ամենայն ազգայնոց. այլ և խոստացաք շահ ստացուածոց մերոց, ընդ սմա տասանորդեցոյք: Եւ միաբան

(*) Զնշանակութիւն բառիս ոչ իմացաք,

սուրբ ուխտիս խոստացան՝ յետ ութօրե-
իցն, աւուր տօնի սուրբ Արարպետին պա-
տարագ մատուցանել վասն մեր: Աորոգե-
ցաւ ի թուականիս Հայոց ՌՆՂԳ: Ի
Հայրապետութեան Տեառն Փիլիպպոսի,
առաջնորդի Մխիթարի: ,,

Ի վերայ միայն Ապելի Ռեզակաբէր արքայապետի,
Խաչի, որ ցանկ բնի ի վերայ «Եղանայ» «Որբ»
Առաքաւորի Նիկիւնայոյն:

«Սուրբ Խաչս յիշատակէ Չիթաղ...
Սուլեանին, իւր եղբայր Օւլինին, Պա-
պինին, Օւրբարին, և իւրեանց ծնաւդա-
ցն, հօրն թաղուն և մօրն Բէկի Սուլթա-
նին, ի դուռն Սէփանայ Անապատին: Ո՛վ
որ էս յիշատակս յափշտակէ, դուրս տանէ,
մասն Յուդայէ, Ասյենէ առցէ: ԹՎին.
ՌՆՂԵ: ,,

ԾԱՆՈԹ ՈՒԹԻՒՆ: Ի Գաւթի սուրբ Աստուածածնի
Եկեղեցւոյն, առաջի զրան Տաճարին առնթեր մի-
մեանց գտանին գերեզմանք սոյն բարեպաշտ չորից
եղբարցս Չիթաղեանց, Ի վերայ միոյն տեսանի թի-
ւոս ՌՃԼԳ, իսկ միւսոցն թուականք, հանգերձ
տապանադրօքն են անվերձանելիք: Թէպէտ քանի մի
ամօք յառաջ լեալ են չեղծեալք և ընթեռնելք,
որպէս պատմեն աստ միաբանք սուրբ ուխտիս Սէ-
փանայ, Յաւուրս յիշատակաց մեռելոցն ի հինգ
նաւակատիսն յետ կենարար պատարագացն, սրբա-
ղան հանդիսիւ, անխափան օրհնեն աւանդարար
ի նախնեաց սրտոց մենաստանիս՝ զգերեզմանս սոյն
բարեպաշտ եղբարցն, որք այսր յիշատակութեանս
աղաղաւ իսկ թաղեալ իցեն ի տեղոջս այսմիկ,
բերել տալով զմարմինսն ի Տփլիսայ այսր, որպէս
մարթ է համարիլ, ըստ ցուցման սոյն արձանա-
գրութեանցս, որք ի նոյն միտս յատկացուցանեն
զաւուրս յիշատակաց նոցին և մատուցման պա-
տարագացն, զիարդ և հարք վանուցս զսոյն պար-
տախոստմունսն յայնմ հետէ մինչև ցայժմ շարու-
նակեալ են առանց զանցառութեան արդարու-
թեամբ, և արդէն ևս շարունակեն նմանապէս ան-

մոռաց պահպանելով զպայմանս սրբութեան նախ-
նեացն իւրեանց, զոր ընկալեալ են ի Չիթաղեան-
ցէն, և չ'մոռանալով զերախտիս բարեպաշտիցն
այնոցիկ, վասն տանս Աստուծոյ, և բաց յայսմա-
նէ յամենայն կիրակէս զկնի պատարագին՝ լեալ է
պարտականութիւն պատարագչան՝ միշտ օրհնել
զայստիկ գերեզմանսն, սրբաղան պատիւ մատուցա-
նելով նոցա, Որպէս լուայ, գտանին ի Տփլիս
քաղաքին ազգատոհմք Չիթաղեանց բարեպաշտ և
բարերար անցանցս այսոցիկ և են պատուաւոր և
յառաջագէմ՝ վաճառականք, և հանգոյն նախ-
նեացն իւրեանց ունին յինքեանս զկայծ եռանդ-
եան անշիջանելի առ սուրբ Անապատս Սէփանայ:

Ի դիւ արքայ Օւլալեանց

ԲԵՆԻՍՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆԻ

ԿԵԱՆՔԸ,

(Շարունակութիւն:)

Գ.

ՄԻՆՁԵՒ ԻՆՔՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ,

Այդ փորձանքները չը յապաղեցին վրայ
հասնելու: Գին համ, Գրանկլինի ազնուա-
սիրտ աղան, նորա հետ համարեա իրրե
որդու հետ կը վարուէր, յանկարծ մեռաւ
և Գրանկլինի յոյսերէն շատերը ի չեք դար-
ձան: Վամայ ակամայ պարտ էր նա այժմ
կրկին այն տեղէն սկսել, որ տեղ որ եր-
կու տարի առաջ դադարած էր—այսինքն
նորէն զրաշարի պաշտօն որոնել Գիլադել-
ֆիայի մէջ: Այն իսկ միջոցին տպարանա-
տէր Վայմերը, որոյ մօտ Գրանկլին առաջ
ծառայած էր, լաւ ոռճկով տեղ մ'ուղեց
տալ նորան իր տպարանին մէջ: Գրանկ-
լին չէր համակրէր այս կասկածելի և իր
արհեստին անհմուտ մարդուն, բայց և
այնպէս ընդունեց նորա առաջարկած